

նուազագոյն չափով անկատարութիւններ ունէին, որոնց մեծ մասը կարելի էր ծածկել, եթէ յարմար կերպով դամուէին: Խնդիրը կարճ կապելու համար, ինձի յայտնեց թէ այդ ատենները ունէր յանձնարարութիւն մը, որ իրեն կը թոյլատրէր այս իմ գոհարներու համար վճարել առաւելագոյն գին մը, քան ինչ որ իրաւացիօրէն կրնայի ակնկալել, կամ հաւանօրէն ստանալ, մասնաւորաբար եթէ ամէնքը մէկ ծախէի: Ատոր վրայ գին մը առաջարկեց՝ ապահովցնելով զիս թէ բարձրագոյն գինն էր որ ինք կուտար: Արդարեւ, այնպիսի գին մըն էր, որ մերժելը խոհեմութիւն չէր: Որով՝ ասակարկութիւնը անմիջապէս աւարտեցաւ: Այսպէս առիթը ունեցայ տեսնելու հարստութիւն մը, որ երկար ժամանակէ ի վեր կը հետապնդէի, եւ որ զլուսն հանուեցաւ մէկ քանի ժամուայ միջոցին: Ասկէ վերջ, Սինեօր Եփրեմ ինձի խօսեցաւ ազամանդներու եւ կայծերու (ռուպի) մասին: Սակայն, իրեն յայտնեցի թէ ցոյց տալու արժանի բան մը չունէի, միայն լիազօրուած էի քանի մը հատ Վենետիկի մէջ ծախելու, երբ հոն գտնուող անձ մը, որ մասնավճար մըն ալ ըրած է, մերժէ ատոնց գինը վճարել, — բան մը որ պիտի կարենայի յաջորդ թղթատարով որոշել: Ան ժպտեցաւ եւ հարցուց թէ՝ գոհարները այնի՞նչ մարդուն չե՞ն զրկուած, եւ թէ այնի՞նչ մարդը չէ՞ որ ատոնց համար գին տուած է: Ատոր վրայ զարմանքս յայտնեցի՝ նոյն ատեն խորհելով, որ Գահիրէի Վենետիկեան հիւպատոսը իրեն (Եփրեմի) խօսած ըլլալու է այս մասին: Սակայն, իմ ենթադրութեանս մէջ կը սխալէի. Վենետիկի անձը Սինեօր Եփրեմի ներկայացուցիչն էր, եւ ան ատիկա ինձի յայտնեց անկեղծօրէն՝ առաջարկելով մարդ մը զրկել Վենետիկ եւ (գոհարներուն) դրամը հոն վճարել, նոյն ատեն ապսպրել որ գոհարները յանձնուէին: Ատոր հաւանելով՝ Մր. Ճանսըն, առանց նկատի առնելու վերջերս իր կրած յոգնութիւնը, պատրաստակամօրէն, հայուն քարտուղար (Իտալացի) Սինեօր Ռէտի հետ հաճեցաւ մեկնիլ, աւարտելու համար

այս առեւտուրը, որ մեծ մտահոգութիւն մըն էր:

«Ես վերջը իմացայ, որ Սինեօր Եփրեմ բոլոր այս գոհարները Ֆրանսացի վաճառականի մը համար կը հաւաքէր, որ Հնդկաստան գտնուած էր, բայց անկէ բերած բոլոր իր գոհարները ծախած ըլլալով՝ այս միջոցին գիւմած էր, վերստին հաւաքածոյ մը ընելու համար: Եւ այսպէս, ի գին իր առեւտրականի նրկարագրին, Ֆրանսացին խոշոր շահ ըրաւ, թէեւ ան առուծախ չէր ընէր որեւէ (գոհարով), որ իր տեսակին մէջ կատարեալ չէր»: 18)

Աւելի քան հետաքրքրական է հայ գոհարավաճառ Եփրեմ Սատի նկարագիրը, որուն այնքան յաջող պատկերը կուտայ Անգլիացի գրողը:

Եփրեմ 1675-ին 51 տարեկան էր, ուրեմն՝ ծնած ըլլալու էր 1624-ին: Դժբախտաբար, ծննդեան վայրին եւ ուրիշ կենսագրական մանրամասնութեանց մասին բան մը չենք գիտեր:

Եփրեմ Սատի մականունը գուցէ զինքը Սիւրբահայ մը ընէ: Ո՛վ գիտէ, թերեւս Հալէպցի հայ մըն էր: Հալէպի մէջ իրեն նման ուրիշ նշանաւոր գոհարագէտ, գոհարագործ եւ գոհարավաճառ հայ մը կար Մուրատ աշխարհական անունով, որ յետոյ քահանայացու Տէր Սարգիս անուամբ: Այս երկուքը ժամանակակից եւ շատ նման են իրարու՝ լեզուագէտ, գոհարագէտ եւ յարակից արուեստներուն ծանօթ ըլլալու հանգամանքով: Բնական է նոյնացում մը չէ որ կ'առաջարկենք, այլ կը մատնանշենք զարմանալի նմանութիւն մը,

18) Անդ՝ էջ 313, Բ. հատոր: Այս հատորին մէջ կը վկայուի, որ Էտուարտ Պրատեն Եւրոպայի մէջ աշխատած է հայոց, հրէից եւ յոյներու հետ առեւտուր ընելու կերպերը սորվիլ (էջ 128): Դարձեալ թէ Լիվոռնիոյ մէջ կային նաեւ առեւտրական հայեր 1670-ական թիւերուն (էջ 243):